

ՀԱՄԱԳՈՐԾԱԾԱԿԱՆ ԲԱՌԵՐԻ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ
ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

ՍԵՂԱ ԷԼՈՅԱՆ

Հայտնի է, որ լեզվի համակարգի գործառուլթյան մեջ է ամբողջութամբ երևան գալիս լեզվի և՛ սոցիալական էությունը, և՛ հաղորդակցական գործառուլթը: Լեզվի համակարգը պոտենցիալ լայն հնարավորություններ է ընձեռում նաև լեզվի ստեղծագործական գործառուլթյան համար:

Լեզվի համակարգի գործառուլթյան ազատ, ստեղծագործական, մասամբ նաև ոչ այնքան նորմատիվ կողմը սերտորեն առնչվում է լեզվական գանձի լիակատար իմացության և լեզվական հմտությունների տիրապետման հետ: Բառերի իմաստային նրբերանգների ոճական հատկանիշները դրսևորվում են խոսքի մեջ, որը լեզվի կոնկրետ դրսևորումն ու կիրառումն է, լեզվի համակարգի գոյության միջոցը:

Խոսքի մեջ (մասնավորապես գեղարվեստական) են հանդես գալիս բառերի փոխաբերական գործածությունները, նրբերանգախմաստային կամ հոմանիշային կապերը, բառերի բազմիմաստային հատկանիշները և վերջապես բառերի արտահայտչական-ոճական, գեղագիտական արժեքը: «Բառի գեղագիտական արժեքը լիակատար է լինում խոսքի մեջ բառի գործածության տարբեր գեպքերում»¹:

Խոսքի մեջ արտահայտչական-ոճական կամ գեղագիտական արժեք կարող են արտահայտել ոչ միայն ոճականորեն նշույթակիր բառերը, օրինակ՝ հրահրուն, հուրհուրան, շուշանագեղ, լուսածին, ոսկեփրփուր և այլն, այլև ամենագործածական կամ, ինչպես ընդունված է բառագիտության մեջ ասել, համագործածական կամ չեզոք շերտի բառերը (իհարկե, կապակցության և շարագասության յուրահատուկ դրսևորումներում): Տեղին է նշել Վինոգրադովը, որ չկա լեզվական ձև, որ չկարողանա դառնալ նյութ պատկերի համար²: Այս յուրահատկությունը նկատել է նաև ռուս գրող Ա. Պ. Ջեխովը: Նա գտնում է, որ բնության պատկերման արտահայտչականությանը հաճախ կարելի է հասնել շատ պարզ և սովորական այնպիսի բառերով ու կապակցություններով, ինչպիսիք են Արևը դուրս եկավ: Մթնեց: Անձրև եկավ և այլն: Եվ արդարև, երբ Վ. Տերյանը XX դ. սկզբներին (10–20-ական թվականներին) գրում էր՝ «Տխուր երեկոն գարկել է վրան», «Սարի ետևում շողերը մեռան», «Փակ են քո սրտի հեռուներն իմ գեմ», «Մեկը իմ սիրտը փշրելով անցավ» և այլն, նա ընգամենը 4–5 համագործածական բառերի համագրությամբ կարողացել էր ստեղծել այսքան պատկերավոր և նրբերանգախմաստներով տարողունակ ու հարուստ բանաստեղծական տողեր: Իհարկե, բառի ճիշտ ընտրության համար բանաս-

¹ Բ. Ի շ խ ա ն յ ա ն. Այո, բառի գեղագիտություն կա. – «Գրական թերթ», 19.02.1965:

² В. Я. Д е р ю г и н. Беседы о русской грамматике. М., 1978, с.38.

տեղծը նկատի է ունեցել Հիմնականում երեք կարևորագույն հանգամանք՝ բառի իմաստային կառուցվածքը, կապակցելիությունը, կիրառության ուղորտը և դրանցով պայմանավորված համակարգային բազմաշերտ կապերը և իմաստային ու կիրառական զուգադրելիությունները, բառերի հոմանիշային կամ նրբերանգային հարաբերությունները: Բառերի կապակցելիության նման կիրառության և շարահասություն շնորհիվ վերոհիշյալ նախադասությունները ստացել են փոխաբերական ոճական-արտահայտչական ինքնատիպ արտահայտություն ձևավորում, քանի որ իրենց ընդհանրական իմաստային կողմով համագործածական հիշյալ բառերը կապակցելիության ճկունության յուրահատկության շնորհիվ հնարավորություն են ստացել վերոհիշյալ նախադասություններում հանդես գալու փոխաբերական ամենատարբեր իրադրություններում: Կարճ ասած՝ վերոհիշյալ համագործածական բառերը արտահայտչականություն են ձեռք բերել գեղարվեստական խոսքի մեջ, մինչդեռ հոգաարտահայտչական ոճի բառերը, այսինքն՝ ոճականորեն նշույթակիր՝ ոչ համագործածական կամ չեզոք բառերը, առանց կիրառության էլ պարունակում են ոճական համապատասխան լրացուցիչ երանդ (Հմմտ. վերևում բերված հրահրուն, հուրհուրան, շուշանագեղ և այլն):

Նշանակում է՝ փոխաբերական նոր իմաստներ համագործածական բառերը ձեռք են բերում խոսքի մեջ, բնականաբար, իրադրության պահանջով, որ նպատակ է բառապաշարի այս շերտի բառերի փոխաբերական գործածությունների բազմազանությունը և բառերի բազմիմաստացմանը, այսինքն՝ բազմիմաստ բառերի պոտենցիալ փոխաբերական իմաստների առաջացմանը:

Բոլոր դեպքերում բառերի փոխաբերական իմաստների առաջացման կամ փոխաբերացման հիմնական պայմանը լեզվի բառագանձի փայլուն իմացությունը, բառաստեղծական անհրաժեշտ վարպետությունը և բառագործածության հմտությունն է, որպեսզի բառերը բաշխվեն այնպիսի բառային միջավայրում (համատեքստում) և այնպես, որ իմացական խոր բովանդակություն ու արտահայտչականություն ստանան: Վիլյամ Սարոյանը, խոսելով դրող Բաբելի մասին, ասում է, որ նա բառերը հենց այնպես էլ չպարտում, այլ դրանց դնում է ամենահարկավոր տեղը: Այդպես են դնում քարը, երբ պատ են շարում³:

Հայոց լեզվի ճկունությունը դրսևորվում է նաև եղած բառերի նրբերանգաիմաստային հնարավորությունների հաշվառումով նոր բառիմաստներ (իմաստային նորաբանություններ) ստեղծելու ունակությամբ: Սրա հետ կապված՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ դեռևս XX դ. սկզբներին Հայ պոեզիայում մեծանուն բանաստեղծների կողմից գործածված հայերեն համագործածական մի քանի որոշակի բառերի (հիմնականում բազմիմաստ) ինքնատիպ հոմանիշային նրբերանգաիմաստներով կիրառված փոխաբերական իմաստներ արդեն գրեթե որոշակիորեն դարձել են տվյալ բառարանային դիսաբառերի փոխաբերական կայուն անուղղակի կամ երկրորդային նոր իմաստներ, որոնք 70–80-ական թվականներին հրատարակված բացատրական վերջին բառարաններում չեն էլ արձանագրվել:

³ «Խորհրդային Հայաստան», 23.01.1980:

Այսպես՝ Հրեղեն բառը Վ. Տերյանի «Բարակիրան Նաիրուհին ինձ ժպտաց, Նաիրուհին տխուրաչյա և համեստ, Այնպես վառ էր լեռնադաստեր դեմքը բաց, Նայվածքն այնպես Հրեղեն ու անարվեստ» (ՎՏԲ, 106) հայտնի բանատողերում ստացել է «արտակարգ, անսովոր գեղեցիկ» փոխաբերական կայուն իմաստը: (Չպետք է մոռանալ, որ ժողովրդական Հեքիաթներում և ժողովրդախոսակցական լեզվում հուրհուր-հրեղեն նշանակում է չափազանց գեղեցիկ, նաև գեղեցկուհի): Մինչգեռ Հրեղեն բառը Ավ. Իսահակյանի գարձյալ հայտնի «Ես ձեզ ասում եմ՝ կգա ոգու սով, Եվ դուք կքաղցեք ճոխ սեղանի մոտ, կընկնեք մուրալու հափրած որկորով՝ Հրեղեն խոսքի, վեհ խոսքի կարոտ» (Իս., 169) բանատողերում նշանակում է արդեն ոչ թե գեղեցիկ, այլ «խիստ ոգեզեն, վեհաշունչ, ցնցող» և բերված Հրեղեն խոսք բառակապակցության Հրեղեն փոխաբերական մակդիրը (ինչպես և ոգու սով իմաստային տարողունակ բառակապակցությունը) կարելի է ասել, որ համատեքստի ոճականորեն ամենահագեցված բառն է և գրեթե անփոխարինելի ու անթարգմանելի է իր համապատասխան բնութագրական բառային հոմանիշների համեմատությամբ: Հրեղեն հատկանշային բառը Իսահակյանի քնարական խոսքում դարձյալ փոխաբերական ինքնատիպ, սակայն այլ նրբիմաստային նշանակություն է ստացել հետևյալ բանատողերում. «է՛յ դու, անգին, թափառական վսեմ կյանք, Հեռուների, անհուների իմ տենչանք: Քո շնորհիվ Հրեղեն եմ, թեևավոր, Աշխարհն իմս է, գլխիս տերն եմ ու Հզոր» (Իս., 175): Այստեղ Հրեղենը փոխաբերական գործածությամբ ստացել է «երկնային, հզոր, անպարտելի» իմաստները: Դուրս գրող Վ. Իվանովը գտնում էր, որ խոսքի արվեստի մեջ տաղանդը, հավանաբար, բառերը գտնելու միջոցն է⁴: Եվ արդարև, բառի տեղին, ճիշտ ու նպատակային տեղադրումը խոսքաչարի մեջ հավասարագոր է տվյալ բառի գյուտին (վկա՝ վերևում բերված Հրեղեն բառի փոխաբերական գործածությունները), քանի որ բառի ստեղծագործաբար և վարպետորեն գործածելու, գրա բառիմաստային հնարավորությունների ճիշտ հաշվառման գեպքում հաճախ դժվար է լինում այլ հոմանիշ գտնելը:

Գեղարվեստական խոսքում բառերի հոմանիշային և փոխաբերական նման նոր իմաստային կիրառությունները անհամար են: Բերենք մեկ օրինակ ևս: Ավ. Իսահակյանի «Ա՛խ, էս իմ յարն է՝ սիրուն, քչքչան... Ուրիշ տղի հետ պսակի կերթա» (Իս., 160) բանատողերում, եթե փորձենք բանաստեղծի սիրելիին բնորոշող քչքչան բառի մոտավոր հոմանիշների շարքից ուրախ, պայծառ, ժպտալիկ, աշխույժ և այլն բառերից որևէ մեկով փոխարինել, բնավ էլ չի ստացվի Իսահակյանի գործածած քչքչան բառին վայել և փոխարինող հոմանիշ: Ծիշտ է նկատել Վ. Բելինսկին, որ պոետական երկի մեջ յուրաքանչյուր բառ պետք է այնքան սպառի երկի իմաստով պահանջվող ողջ նշանակությունը, որ ակնհայտ լինի, թե՛ լեզվի մեջ ուրիշ բառ չկա, որն այստեղ կարողանար փոխարինել նրան⁵: Եթե մեր բերած վերոհիշյալ Հրեղեն բազմիմաստ բառի մեծանուն բանաստեղծների ստեղծած հայտնի բանատողերում գրա փոխաբերական գործածության և փոխաբերական կայուն բառային իմաստների միջև ինչ-որ չափով դժվար է սահ-

⁴ «Գրական թերթ», 2.03.1984:

⁵ В. Б е л и н с к и й. Избранные сочинения. М. – Л., 1949, с. 157.

ման դնել (բացի Տերյանի Հրեղեն բառի գործածությունից, որ արդեն, «արտակարգ գեղեցիկ» փոխաբերական կայուն անուղղակի իմաստն է ստացել), ապա նույն ժամանակահատվածի հայ պոեզիայում գործածված վառել և վառվել բազմիմաստ բառերը փոխաբերական այնպիսի նոր կայուն իմաստներ են ստացել (մասնավորապես Վ. Տերյանի պոեզիայում), որ թերևս արդեն չի կարելի չփոթել բառի փոխաբերական գործածությունների հետ:

Վառել և վառվել բառերի ստացած փոխաբերական կայուն իմաստները նույնպես տեղ չեն գտել ժամանակակից հայերենի վերջին երկու բառարաններում: Թեև, ի տարբերություն Հրեղեն գլխաբառի համար հիշյալ բառարաններում բերված ընդամենը երեք չորս բառիմաստային տարբերակների, վառել և վառվել բազմիմաստ գլխաբառերը նշված բառարաններում աչքի են ընկնում բաղմամբիվ անուղղակի կամ երկրորդային փոխաբերական իմաստային տարբերակներով:

Այսպես թեև էդ. Աղայանի բացատրական բառարանում (1976) վառել համագործակցության բազմիմաստ գլխաբառի համար բերված է 24, վառվել-ի համար 12 անուղղակի իմաստային տարբերակ, իսկ ժամանակակից հայերենի ակադեմիական բացատրական բառարանում (1980) վառել գլխաբառի համար բերված է 17, վառվել-ի համար 9 անուղղակի կամ երկրորդային իմաստ, այնուհանդերձ, հիշյալ բառերը XX դ. սկզբի քնարական հանճարեղ ստեղծագործություններում արդեն ակնհայտորեն ստացել էին նաև փոխաբերական այնպիսի կայուն նկատելի իմաստներ, որոնք նույնպես արձանագրված չեն ժամանակակից հայերենի բացատրական վերոհիշյալ վերջին բառարաններում: Եվ դա այդքան էլ զարմանալի չէ, քանի որ XX դ. սկզբներին մեծանուն բանաստեղծների կողմից գործածված մի շարք բառերի հոմանիշային տարբերակների ընտրությունը և գործածությունը հիմնականում այնքան անկրկնելի, անփոխարինելի և ինքնատիպ փոխաբերականություններ է հագեցած և այնքան բնական է հնչում, որ երբեմն գրեթե աննկատելի է մնում սովյալ բառերի գործածության արդեն կայուն դարձած փոխաբերական անուղղակի նոր իմաստի և ընդհանրապես փոխաբերաբար գործածության տարբերակումը: Այսպես Տերյանի «Գարուն, ամեն տեղ նոր կյանք ես վառել, իմ սրտում էլ ես թևերդ փռել» (ՎՏԲ, 26) բանաստեղծությունում վառել բառը ստացել է փոխաբերական նոր տարածել, սփռել իմաստները: Իսկ «Ուզում եմ վաղվա ցնծության գուշակ, վառել երգերս որպես դրոշակ Ու մեռնել որպես հերոսն է մեռնում» (ՎՏԲ, 57) բանաստեղծությունում վառել-ը ստացել է փոխաբերական ներկայացնել, ցուցադրել, պատկերել իմաստները, որոնք նույնպես կարելի է դնել վառել բառարանային գլխաբառի կայուն փոխաբերական անուղղակի իմաստների շարքում:

Անհրաժեշտ է նշել նաև, որ այս նշանակությունները (ցուցադրել, ներկայացնել, պատկերել) վառել բայը XX դ. վերջին տասնամյակում գործածվել է նաև գիտական գրականության մեջ. ինչպես՝ «Վարուժանը ներբողում է հայրենի գյուղը, հացի արարչույթյունը, վառում է Բրգնիքի հավաքական պատկերը»⁶:

⁶ «Հայաստանի Հանրապետություն», 13.07.1994:

Այժմ գանք վառվել բայի XX դ. սկզբներին գեղարվեստական խոսքում գործածված փոխաբերական կայուն անուղղակի իմաստներին:

Վառվել բազմիմաստ բառը ստացել է կայուն փոխաբերական հետևյալ անուղղակի իմաստները.

1. Հավերժանալ, հռչակվել, հնչեղանալ. «Ես եմ հիմա մի պոետ Ու իմ անունը Ջարենց, Պիտի վառվի դարերում, Պիտի լինի բարձր ու մեծ» (ԵՁ, 35-36), «Ու թռչում է երգս նետ դեպի վառվող ապագան» (ԵՁ):

2. Տարածվել, սփռվել. «Շուրջս վառված է մի անուշ տազնապ, Մի նոր հուզում է սիրտս մրկում» (ՎՏԲ, 25):

3. Դրոշմվել. «Գեղեցկութունդ վառված է բոցե Դաշույնի նման սև կյանքի վրա» (ՎՏԲ, 106):

4. Զերմանալ, սիրո քնքշանքով լցվել. «Ու երբ գնայիր, Գիշերս անքուն Դառնար գալիքի մի թովիչ խոստում Ու վառվեր հոգիս պարզ ու իմաստուն, Իմ վրանի տակ, սարերի գրկում...» (ՎՏԲ, 114):

5. Սպառվել, վերջանալ. «Որպես դաշույն՝ օրերի հնամենի պատյանից Ելնում է կարծր ու բոսոր Եվ չի մտնի հնի փոշոտ պատյանը նորից, Եվ չի թաղվի օրերում, որ վառվեցին ու չկան» (ԵՁ): «...Այս արև՝ այս վա՛ռ աշխարհում, Քանի կաս՝ վառվի՛ր ու գնա» (ԵՁ, ԵԺ, 254):

Իհարկե, բազմիմաստ բառերը խոսքի մեջ կարող են հանդես գալ, բնականաբար, հոմանիշային տարբեր շարքերում (առավելապես փոխաբերական առումներով), քանի որ խոսքի մեջ է իրագործվում բառի կյանքը, այսինքն՝ բառագտագործման և բառընտրության գործընթացը, որ մասնավորապես առնչվում է հենց բառային հոմանիշության հետ: Հոմանիշների ճիշտ և տեղին գործածելը կամ բառընտրության ու բառագործածության արվեստոր ինքնին պարզ ու հասարակ խնդիր չէ, մանավանդ որ բառերի հոմանիշային նրբերանգների անկրկնելի ու անփոխարինելի կիրառութուններից հաճախ գուռ է բացվում նաև բառերի փոխաբերական կայուն իմաստային նոր տարբերակների կամ նոր անուղղակի իմաստների առաջացման առջև:

Բառագտագործման հմտութունը կախված է խոսողի կամ ստեղծագործողի լեզվի բառագանձի իմացության բարձր մակարդակից, ոճաբանական նուրբ հոտառութունից, լեզվի ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկութունների ճիշտ կիրառութունից և, որ ամենակարևորն է, նաև ստեղծագործողի երևակայութունից: Ստեղծագործողի երևակայության մակարդակի ինքնատիպությամբ էլ հենց բացատրվում է գրողի ոճական ինքնատիպութունը, նրա ոճը: «Արվեստագետը ոչ մի տեղից բարիք չպետք է սպասի, քան իր իսկ երևակայութունից», — ասել է ռուս գրող Բ. Պաստեռնակը⁷:

Գրողի կամ արվեստագետ-ստեղծագործողի բառերի գործածության համատեքստի միջավայրից, ինքնահատուկ մակդիրների կիրառութունից, գրողին բնորոշ առձայնությունների և բաղաձայնությունների ոճական հնարների և բառերի հոմանիշային նրբերանգների անկրկնելի կիրառութուններից է կախված նրա ոճական ինքնատիպութունը, գրողի ոճը: Այսպես՝ «Շարան-շարան ամպերն ելան», «Քույր իմ նազելի», «Է՛յ, ջա՛ն հայրենիք,

⁷ «Հայաստանի Հանրապետություն», 4.03.1994:

ինչքան սիրուն ես», «Քարե-արցունքս, արուն-արցունքս Ջրերուդ խառնեմ, Լամ թափառելով ափերդ Արագ»: Կամ «Այնտեղ Նաիրյանն է նազում», «Մշուշի միջից տեսիլ դյուրթական, Բացվում է կրկին Նաիրին տրտում...», «Աչնան մշուշում շուկ ու շրշուն», «Մի՞թե վերջին պոետն եմ ես, Վերջին երգիչն իմ երկրի», «Ամեն վայրկյան սիրով տրտում ասում եմ ես մնաս բարով...»: Եվ կամ «Յոթը հազար գույն ու բույրի ծաղիկները Սիփանա, Մեկը մեկից շողվ ու շաքար ողջը մեղր ու մանանա» բանաստղերից ելնելով հայոց գրականությունը ծանոթ լինողը իսկույն կարող է կռահել, որ առաջինը Ավ. Իսահակյանի ոճն է, երկրորդը՝ Վ. Տերյանի, իսկ երրորդը՝ Հովհ. Շիրազի:

Այնպես որ, թեև հիշյալ հայ դասական մեծ ստեղծագործողների ոճական առանձնահատկությունների, նրանց գրելաոճի ինքնատիպությունները բացահայտ են ու ըմբռնելի և հայերենն իր հոմանիշային հարուստ համակարգով լայն հնարավորություն է ընձեռում համապատասխան բառերով արտահայտելու մարդկային մտքի ցանկացած և ամենատարբեր նրբերանգները: Սակայն միաժամանակ պետք է նկատել նաև, որ հայ պոեզիայի գեղարվեստական խոսքն այնքան լայնածավալ և լայնահուն է, որ նույնիսկ հայ գեղարվեստական գրականության մեծ դասականների գործածած մի շարք համագործածական բազմիմաստ բառերի ստացած փոխաբերական նոր կայուն բառիմաստներն է հնարավոր անմիջապես նկատել և նկատելի դարձնել, մանավանդ որ մեր լեզվի արտահայտչական հնարավորությունների համար բառիմաստային ոչ մի ինքնատիպ (անգամ գեղարվեստական արժեք ձեռք բերած) նրբերանգ անակնկալ և զարմանալի չէ և բառերի փոխաբերական գործածությունները գրեթե անսահման են:

Եվ անհնար է չնկատել, որ XX դ. սկզբների մեծանուն բանաստեղծներ Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի, Ե. Չարենցի ստեղծած բանաստեղծական և բառաստեղծական ավանդույթներն էին նաև, որ առաջ շարժեցին հայ պոեզիայի ավանդական բանաստեղծական մտածողությունը, հայ բանաստեղծական մտքի, զգացումի և խոհափիլիսոփայական թռիչքի ունակությունները հասցնելով և շարունակաբար հաղորդելով մինչև Հովհ. Շիրազ, Ս. Կապուտիկյան, Հ. Սահյան, Հ. Հովհաննիսյան, Վ. Դավթյան և, վերջապես, շնորհագեղ Պ. Սևակ ու այլք:

Ամփոփելով նկատենք, որ բառերի հոմանիշային և մասնավորապես փոխաբերական կիրառությունները, բառերի կապակցելիության հնարավորությունները անթիվ ու անսահման են, գրեթե ավելի հարուստ, քան լեզվի բառապաշարն իր բառերով ու դարձվածքներով, քանի որ արտահայտում են բովանդակ կյանքն իր անչափելի, բազմազան երևույթներով և իրույթներով:

Համառոտագրություններ

ՎՏԲ – Վահան Տերյան, Բանաստեղծություններ, Երևան, 1936:

Իս. – Ավետիք Իսահակյան, Երկեր, հ. 1, Երևան, 1958:

ԵՉՀ – Եղիշե Չարենց, Հատընտիր, Երևան, 1954:

ԵՉ – Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1962: